

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՄՏՈՒԳԱԹԵՐԹ N
ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(ՏԳՏԴ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 10.5)**

_____ 201 թ.

| | | |
|--|----------------------|---------------------------------------|
| (ծառայության տարածքային ստորաբաժանման անվանումը) | (գտնվելու վայրը) | (հեռախոսահամարը (\$աքսը), էլ. հասցեն) |
| <input type="text"/> | <input type="text"/> | <input type="text"/> |
| (անձնական ծածկագիրը) | (պաշտոնը) | անունը, հայրանունը |
| <input type="text"/> | <input type="text"/> | <input type="text"/> |
| (անձնական ծածկագիրը) | (պաշտոնը) | անունը, հայրանունը |
| <input type="text"/> | <input type="text"/> | <input type="text"/> |
| (անձնական ծածկագիրը) | (պաշտոնը) | անունը, հայրանունը |
| <input type="text"/> | <input type="text"/> | <input type="text"/> |

Ստուգման սկիզբը _____ ավարտը՝ _____
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը) (տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքը՝ _____
(ստուգման տարեկան ծրագիրը, դիմում-բողոքը և այլն)

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)
(ՀՎՀՀ)

| | |
|---|---------------------------------------|
| (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) | (հեռախոսահամարը (\$աքսը), էլ. հասցեն) |
| (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) | (հեռախոսահամարը (\$աքսը), էլ. հասցեն) |
| (ստուգվող օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը, կոնտակտային տվյալները) | (հեռախոսահամարը (\$աքսը), էլ. հասցեն) |
| (ստուգվող օբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) | (հեռախոսահամարը (\$աքսը), էլ. հասցեն) |

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը (ընդգրկված հարցերի համարները) _____

| Տեղեկատվական բնույթի հարցեր | | |
|-----------------------------|--|-----------|
| NN ը/կ | Հարցը | Պատասխանը |
| 1. | Տնտեսավարող սուբյեկտի անվանումը (ներառյալ իրավաբանական անձանց ֆիրմային անվանումը), անհատ ձեռնարկատիրոջ անունը, անձնագրային տվյալները (սերիան, համարը, ում կողմից է տրված և այլն) | |
| 2. | Պետական գրանցման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 3. | Պետական գրանցման վկայականի սերիան և համարը | |
| 4. | Տնտեսավարող սուբյեկտի պետական գրանցման հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը | |
| 5. | Իրավաբանական անձ հանդիսացող՝ տնտեսավարող սուբյեկտի պետական ռեգիստրի վկայականի համարը | |

| | | |
|-----|---|--|
| 6. | Տնտեսավարող սուբյեկտի գործունեության վայրի հասցեն և կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ) | |
| 7. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումների անվանումները և գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ | |
| 8. | Տնտեսավարող սուբյեկտի կազմում գործող բոլոր առանձնացված ստորաբաժանումներում իրականացվող գործունեության տեսակները | |
| 9. | Տնտեսավարող սուբյեկտների և դրանց առանձնացված ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը և այլ կապի միջոցներ) | |
| 10. | Տեղեկություններ լիցենզիայի մասին (տալու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը) | |
| 11. | Տնտեսավարող սուբյեկտների կողմից գործունեությունն սկսելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 12. | Տնտեսավարող սուբյեկտների օբյեկտների կառուցման (վերջին վերակառուցման (վերանորոգման) տարեթիվը, ամիսը, ամսաթիվը | |
| 13. | Ապրանքային նշանի, հանրահայտ ապրանքային նշանի առկայության մասին տեղեկություն | |
| 14. | Ներդրված որակի կառավարման համակարգը (եթե առկա են ISO 9001, HACCP, ISO 22000, ISO 14000) | |
| 15. | Արտադրության հզորությունը, փաստացի կարողությունը, մեկ օրում հերթափոխի թիվը | |
| 16. | Աշխատողների թիվը, նրանցից անմիջապես արտադրությունում աշխատողների թիվը | |
| 17. | Թողարկվող արտադրատեսակները՝ անվանացանկով, այդ թվում՝ հատուկ նշանակության սննդամթերքի արտադրության | |
| 18. | Կազմակերպության շրջանառության (իրացման) ծավալները՝ նախորդ տարվա տվյալներով (դրամ) | |
| 19. | Նպատակային շուկան՝ միջազգային և (կամ) ազգային, մարզային, տեղական շուկաներ, նշել՝ թե որ շուկայում է արտադրանքն իրացվում: | |

Վերահսկողական բնույթի հարցեր

| NN ը/կ | Հարցերը | Այո Ոչ Չ/Պ | | | | Ստուգման եղանակը | Նորմատիվ ակտի համարը | Նշումներ |
|-----------|--|------------|---|---|-----|-----------------------|---|----------|
| | | 3 | 4 | 5 | 6 | | | |
| 1. | Արտադրական, կենցաղային և օժանդակ սենքեր | | | | | | | |
| 1.1. | Տեխնոլոգիական գործընթացը կազմակերպված է այնպես, որպեսզի բացառվի հումքի և կիսապատրաստվածքների հանդիպակաց հոսքը պատրաստի սննդամթերքի հետ: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 26 | |
| 1.2. | Արտադրական, օժանդակ, կենցաղային սենքերը պահվում են մաքուր և նորոգ վիճակում, ունեն խոնավ մաքրման և ախտահանման հնարավորություն, հատակն առանց ձեղքերի է՝ ծածկված անջրաթափանց նյութերով: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 23 | |
| 1.3. | Արտադրական տարածքներն ապահովված են ձեռքերը լվանալու համար նախատեսվող | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. | |

| | | | | | | | |
|------|---|--|--|-----|---------------------|--|--|
| | լվացարաններով, որոնք ապահովված են մշտապես հոսող ջրով, օձառով, ախտահանման միջոցներով և չորացման հիգիենիկ սարքերով: | | | | | N 34-Ն որոշման հավելված, կետ 25 | |
| 1.4. | Մաքրման գույքը և լվացող ու ախտահանիչ նյութերը պահվում են արտադրական տարածքից դուրս առանձնացված տարածքում: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 25, 7-րդ ենթակետ | |
| 1.5. | Կենցաղային սենքն ապահովված է հանդերձարաններով, որտեղ հագուստը, արտահագուստը, սանիտարական հագուստը և կոշիկները պահվում են առանձին, իսկ կեղտոտված պաշտպանիչ հագուստը պահվում է առանձին: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 25 | |
| 1.6. | Աշխատանքներն ավարտելուց հետո արտադրական, կենցաղային և օժանդակ սենքերը մանրակրկիտ լվացվում և ախտահանվում են ներկայացվող հիգիենիկ պահանջներին համապատասխան: | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 23 | |
| 2. | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՈՒՑՈՒՄ | | | | | | |
| 2.1. | Կազմակերպությունն ապահովված է ջրամատակարարմամբ և ջրահեռացմամբ, խմելու ջրի անխափան (պահուստային տարողությունների առկայություն) ջրամատակարարմամբ: | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 46-րդ և 49-րդ կետեր | |
| 3. | ԼՈՒՍԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՕԴԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
| 3.1. | Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական և արհեստական լուսավորությամբ: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 25 | |
| 3.2. | Արտադրական բոլոր սենքերն ապահովված են բնական օդափոխության պայմաններով և արհեստական օդափոխության համակարգերով: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 25, 3-րդ ենթակետ | |
| 4. | ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՋՆԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԱ | | | | | | |
| 4.1. | Սննդի շղթայում ներգրավված անձնակազմը ենթարկվել է պարտադիր նախնական և | | | 1.5 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. | |

| | | | | | | | |
|-----------|--|--|--|-----|---|---|--|
| | պարբերական բժշկական զննությունների, որոնց փաստաթղթավորված ապացույցները (անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի, բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկը, անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու մասին որոշում) պահվում են ներքին փաստաթղթերի հետ տնտեսավարողի մոտ: | | | | | N 34-Ն որոշման հավելված, կետ 55 | |
| 4.2. | Յուրաքանչյուր անձ պահպանում է անձնական հիգիենայի կանոնները և կրում է համապատասխան մաքուր, անհրաժեշտության դեպքում, սանիտարական հագուստ: | | | 1.5 | ակնադիտական զննում | « կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 53 | |
| 5. | ՄԻՋԱՏՆԵՐԻ ԵՎ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՏԱՐԿՈՂ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 5.1. | Ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ կենդանիների (ճանձեր, միջատներ, ուտիճներ, վնասատուներ, կրծողներ)՝ սննդամթերքի պատրաստման, մշակման, պահման և տեղափոխման տարածքներ մուտքը կանխելու, ինչպես նաև վնասատուների դեմ պայքարելու ուղղությամբ: | | | 1 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | « կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 59 | |
| 6. | ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ | | | | | | |
| 6.1. | Ապահովված են մնացորդների պահման և հեռացման պատշաճ հիգիենիկ պայմաններով՝ աղբարկղեր և աղբի հավաքման համար տեղադրված են անջրաթափանց, կափարիչներով փակվող կուտակիչ տարողություններ, գտնվում են նորոգ վիճակում և տեղակայված են հնարավորինս պատշաճ հեռավորության վրա: | | | 1 | ակնադիտական զննում | « կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 13-րդ գլուխ, կետ 44 | |
| 7. | ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՒՅՔ | | | | | | |
| 7.1. | Սարքավորումների տեղադրումը կատարված է այնպես, որպեսզի ապահովվեն աշխատողների ազատ գործողությունների, տեխնոլոգիական գործընթացների նկատմամբ հսկողության իրականացումը, ինչպես նաև սարքավորումների և տարածքի մաքրումը, լվացումը և ախտահանումը: | | | 1.5 | ակնադիտական զննում | « կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 39 | |

| | | | | | | | | |
|------|--|--|--|--|-----|---|--|--|
| 7.2. | Արտադրանքի հետ շփվող սարքավորումների մակերեսը պատրաստված է սննդամթերքի հետ շփման համար նախատեսված նյութերից: Սարքավորումների և գույքի մակերեսը հարթ է, հեշտությամբ լվացվող և ախտահանվող: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 39 | |
| 7.3. | Բոլոր սարքավորումները, գործիքները, պարագաները և բեռնարկղերը, որոնք շփման մեջ են գտնվում սննդամթերքի հետ, ենթարկվում են պատշաճ մաքրման ու ախտահանման: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 39 | |
| 7.4. | Ելնելով տեխնոլոգիական նշանակման անհրաժեշտությունից՝ սարքավորումներն ապահովված են չափիչ և ստուգիչ սարքավորումներով: | | | | 2 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 40 | |
| 7.5. | Գույքի, տարայի, ներարտադրամասային փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար նախատեսված են հատուկ լվացման տեղամասեր՝ ապահովված տաք և սառը ջրով, լվացման ջրերի հեռացման համակարգով, լավ օդափոխությամբ: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 27 | |
| 7.6. | Բազմակի օգտագործման բեռնարկղերը հեշտությամբ մաքրվող և ախտահանվող են: Կաթի և կաթնամթերքների պատրաստման և պահպանման տարողությունները յուրաքանչյուր դատարկվելուց հետո ենթարկվում են սանիտարական մշակման: | | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 67 | |
| 7.7. | Կաթի և կաթնամթերքների արտադրությունում օգտագործվում է միայն համապատասխան տեխնոլոգիական հրահանգներով նախատեսված տեխնոլոգիական սարքեր և սարքավորումներ: | | | | 1.5 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 6.1 | |
| 8. | ՀՈՒՄԲԻ ԵՎ ՊԱՏՐԱՍԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՓՈՆԱԴՐՈՒՄ, ՄԱԿՆՇՈՒՄ ԵՎ ՊԱՀՈՒՄ | | | | | | | |
| 8.1. | Կաթնամթերքի փաթեթավորման համար օգտագործվող նյութերը բավարարում են տեխնիկական կանոնակարգերի պահանջները և չեն հանդիսանում սննդամթերքի աղտոտման աղբյուր: | | | | 3 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, կետ 64 | |

| | | | | | | | |
|------|---|--|--|-----|---|---|--|
| 8.2. | Փաթեթավորման գործընթացները կատարվում են սննդամթերքի աղտոտումը բացառող պայմաններում՝ ապահովելով փաթեթավորման ամբողջականությունն ու մաքրությունը: | | | 2 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 65-րդ և 66-րդ կետեր | |
| 8.3. | Կաթնամթերքի փոխադրումն իրականացվում է հատուկ մասնագիտացված փոխադրամիջոցներով, որոնք ունեն սառեցվող կամ հավասարաջերմ թափք և չեն օգտագործվում ոչ պարենային ապրանքների տեղափոխման համար: | | | 1.5 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 33-րդ և 38-րդ կետեր ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 46 | |
| 8.4. | Փոխադրամիջոցները տեխնիկապես սարքին են, մաքուր, ըստ անհրաժեշտության, ախտահանված: | | | 1.5 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 15.2-րդ և 32-րդ կետեր ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 46 | |
| 8.5. | Կաթնամթերքը չի փոխադրվում այլ մթերքների (մսեղեն, ձկնեղեն, բանջարեղեն, կիսապատրաստվածքներ, ձու, մրգեր) հետ համատեղ: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 20.01.2011 թ. N 34-Ն որոշման հավելված, 33-րդ և 38-րդ կետեր ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 46 | |
| 8.6. | Հումքի, համեմունքների և պատրաստի արտադրանքի տեղավորումը պահեստներում կամ խցիկներում և դրանց պահպանումը կատարվում են խմբաքանակներով՝ նշելով արտադրման ամսաթիվը և խմբաքանակի համարը: | | | 1.5 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 28-ի N 1392-Ն որոշում | |

| | | | | | | | | |
|-------|---|--|--|--|---|---|---|--|
| 8.7. | Արտադրությունում կիրառվող սննդային հավելումները պահվում են գործարանային փաթեթներում (չվնասված) և ունեն պիտակներ: | | | | 1 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ մաս | |
| 8.8. | Մանկական կաթնամթերքը փաթեթավորվում է միանվագ օգտագործման համար նախատեսված ծավալով: | | | | 2 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 38 | |
| 8.9. | Մականջումը հայերեն է և ընթերցելի, համապատասխանում է ՀՀ օրենքներին և ենթաօրենսդրական ակտերով նախատեսված մականջման պահանջներին: Մանկական սննդի համար նախատեսված կաթի և կաթնամթերքի մականջվածքում արտացոլվում է, որ դրանք նախատեսված են որպես մանկական սննդամթերք: | | | | 4 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3, 4, 5, 7, 9.2 մասեր ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 38 | |
| 8.10. | Կաթի և կաթնամթերքի արտադրատեսակները համապատասխանում են կաթի և կաթնամթերքի տեխնիկական կանոնակարգով սահմանված հասկացություններով նախատեսված արտադրատեսակների բնութագրերին: | | | | 5 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, II բաժին | |
| 8.11. | Կաթը և կաթնամթերքը, բացի պաղպաղակից, պանրից, կարագից, չոր կաթնամթերքից, պահեստում պաղեցվում են մինչև (4±2) C ջերմաստիճանը: | | | | 3 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 48 | |
| 8.12. | Կշռածրարված (շշալցված) կաթի և կաթնամթերքների գտաքաշերի բացասական շեղումները չեն գերազանցում 1-6 տոկոս թույլատրելի շեղումները: | | | | 2 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 45 | |
| 9. | ՀՈՒՄՔԻ ԵՎ ՊԱՏՐԱՍԻ ԿԱԹՆԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ | | | | | | | |
| 9.1. | Կաթնամթերք արտադրող կազմակերպությունում ընդունվող հում կաթն ստանում են գրանցված և վարակիչ | | | | 4 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» | |

| | | | | | | | |
|------|--|--|--|---|--|--|--|
| | հիվանդություններից զերծ տնտեսություններից առողջ կենդանիներից՝ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի ուղեկցությամբ: | | | | | ՀՀ օրենք, հոդված 9, ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 7 | |
| 9.2. | Ընդունվող ամբողջ հունքը համապատասխանում է դրանց անվտանգությունը հավաստող պահանջներին և ունի անվտանգությունը հավաստող փաստաթղթեր: | | | 5 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1 | |
| 9.3. | Կաթնամթերք արտադրող կազմակերպությունում իրացվում է միայն անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկված հում կաթը՝ համապատասխան եզրակացության առկայությամբ: | | | 3 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1 ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 8 | |
| 9.4. | Օժանդակ և փաթեթավորող նյութերը, տարաները, համապատասխանում են դրանց անվտանգության պահանջներին և ունեն անվտանգությունը հավաստող հավաստագրեր կամ հիգիենիկ եզրակացություններ: | | | 2 | ակնադիտական զննում փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 2 ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 43 | |
| 9.5. | Կաթի և կաթնամթերքի համապատասխանությունը հավաստելու համար առկա է համապատասխանության հայտարարագիր կամ սերտիֆիկացման սխեմաներից որևէ մեկով հավաստված համապատասխանության սերտիֆիկատ: | | | 3 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 90 | |
| 9.6. | Կաթնամթերքի արտադրությունում օգտագործվող սննդային հավելումները ներառված են տվյալ սննդամթերքի տեսակի արտադրության համար թույլատրելի սննդային հավելումների ցանկում և | | | 2 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 07.07.2011 թ. N 993-Ն որոշում | |

| | | | | | | | |
|------------|---|--|--|---|---------------------|--|--|
| | ապահովում են տեխնիկական կանոնակարգի պահանջները: | | | | | | |
| 9.7. | Թողարկվող արտադրանքը համապատասխանում է դրանց անվտանգության պահանջներին: | | | 7 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 1 | |
| 9.8. | Կաթի և կաթնամթերքի հետազոտելիությունն ապահովում է տվյալ խմբաքանակի կաթի և կաթնամթերքի շրջանառության բոլոր փուլերում՝ փաստաթղթային նույնականացմամբ: | | | 3 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 70 | |
| 10. | ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐ | | | | | | |
| 10.1. | Արտադրական գործընթացն իրականացվում է տեխնոլոգիական հրահանգների, բաղադրագրերի առկայությամբ: | | | 7 | փաստաթղթային զննում | «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 1-ին մաս | |
| 10.2. | Կաթնամթերքի արտադրությունում նոր ընդունված կաթը (պաղեցրած) չի խառնվում արտադրությունում պահվող կաթի հետ: | | | 1 | ակնադիտական զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված | |
| 10.3. | Մանկական սննդի կաթնամթերքում բացակայում է գենետիկորեն ձևափոխվող աղբյուրների և դրանցից պատրաստված բաղադրամասերի առկայությունը: | | | 3 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշման հավելված, կետ 29 | |
| 11. | ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ | | | | | | |
| 11.1. | Արտադրողի կողմից իրականացվում է հումքի և պատրաստի արտադրանքի լաբորատոր հսկողություն որակի և անվտանգության ցուցանիշների նկատմամբ՝ ներարտադրական լաբորատորիայի կողմից կամ ըստ սահմանված կարգի հավատարմագրված լաբորատորիայի կողմից (պայմանագրային հիմունքներով): | | | 4 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշում | |
| 11.2. | Իրականացվում է վնասակար նյութերի քանակության նկատմամբ լաբորատոր հսկողություն, գնահատվում է յուրաքանչյուր սարքավորման | | | 1 | փաստաթղթային զննում | ՀՀ կառավարության 21.12.2006 թ. N 1925-Ն որոշում, աղյուսակ N 3 | |

| | | | | | | | |
|-------------------------------|--|--|--|--|--|--|--|
| սանիտարական մշակման որակը: | | | | | | | |
|-------------------------------|--|--|--|--|--|--|--|

| | | | | |
|----|--|---|---|---|
| 1. | «Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Զ/Պ»՝ չի պահանջվում, չի վերաբերվում | | | V |

Ծանուցում՝
 «Այո»՝ նշվում է հարցում ներառված պահանջների կեսի և կեսից ավելիի դրական պատասխանի դեպքում, որը չի կշռավորվում:
 «Ոչ»՝ նշվում է հարցում ներառված պահանջների՝ մինչև կեսի դրական պատասխանի դեպքում, որը կշռավորվում է:

**ՀՀ գյուղատնտեսության
 նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն**

Հանձնարարական*

Անհատ ձեռներեցին (իրավաբանական անձի լիազորված
 անձին) _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

ստուգման ժամանակ բացահայտված սննդամթերքի անվտանգության կանոնների և նորմերի խախտումները վերացնելու նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

| № ը/կ | Անհրաժեշտ միջոցառումը՝ խախտումը վերացնելու համար | իրականացման ժամկետը, մինչև՝ |
|----------|--|-----------------------------|
| | | |

Տեսուչի ստորագրությունը _____

Տնտեսավարողի ստորագրությունը _____

*Կազմվում է երկու օրինակից՝ կողմերի համար:

**ՀՀ գյուղատնտեսության
 նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն**

Հանձնարարականի կատարման հսկման թերթ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության
 ստուգում իրականացնող տեսուչին

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

